



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 30 ՄԱՐՏ, 2026

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բապմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

*Երեւելի լոյս ստեղծեր, զՏիւ եւ զգիշեր բաժանեցեր.
Ծագեա մեզ. Տէ՛ր, ի գիշերի զճառագայթս իմանալի.
Տուր յամենայն ժամանակի զՊաճկանող աջքո Հովանի.
Չի ի տուրնջեան եւ գիշերի Տացութեզ փառս անլուելի:*

*Սիրոյ քո Հուր արկեալյերկիր՝ Բորբոքեցի ի Հոգիս մեր.
Վխորհուրդ սրտից մեր մաքրեցէ՛ զԼոյս գիտութեան քո փայլեցէ.
Ի քնոյ մաշու զմեզ զարթուցէ, զՄիտս բոցովքս վառեցէ.
Չի ի տուրնջեան եւ գիշերի Տացութեզ փառս անլուելի:*

ԱՊՈԹՔ

Տէ՛ր Աստուած մեր, տուր շնորհք, որպէսզի մեր հոգիները օրհնաբանեն Քեզ, եւ փառաբանեն Քու Սուրբ Անունդ: Դուն է որ կը ներես մեր անօրէնութիւնները, կը բժշկես մեր բոլորին տկարութիւնները: Դուն է որ կը փրկես մեր կեանքը կործանումէն եւ կը պսակես մեզ սի-րովդ ու գթութեամբդ: Տէ՛ր, Դուն ողորմած ես ու գթած, երկայնամիտ եւ առատ ողորմութեամբ: Դուն մեզի չես հատուցեր մեր մեղքերուն համեմատ, այլ հայրական սիրովդ կը գթաս մեզի: Տէ՛ր, իմաստութիւն տուր, որ միշտ յիշենք Քու բարեբարութիւններդ, սիրտ մը՝ որ կը գոհանայ Քեզմով, եւ կեանք մը՝ որ կը փառաւորէ Քեզ ամէն օր, յաւիտեանս. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏեր աղաչեցուցուր: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածամայնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տեր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոյ արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

ՍԱՂՄՈՍ 103

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ

Օրհնաբանէ Տէրը, ով իմ անձս,
օրհնաբանէ անոր սուրբ անունը, ով իմ էութիւնս ամբողջ:
Օրհնաբանէ Տէրը, ով իմ անձս, եւ մի մոռնար անոր բոլոր բարիքները:
Ան է որ կը փաւէ բոլոր մեղքերդ, կը բժշկէ բոլոր հիւանդութիւններդ:
Ան է որ կեանքդ կը փրկէ կորուստէն,
եւ իր սիրովն ու գթութեամբը կը պարուրէ քեզ:
Ան է որ բարիքներով կը լեցնէ քու կեանքդ,
այնպէս՝ որ միշտ երիտասարդ մնաս, արծիւներուն պէս:
Տէրը բոլոր գրկեալներուն արդարութիւն կը հատուցանէ,
եւ անոնց իրաւունքը կը պաշտպանէ:
Անիկա իր կամքը յայտնեց Մովսէսին,
եւ իր գործերը յայտնեց Իսրայէլի որդիներուն:
Ողորմած եւ բարեգութ է Տէրը, համբերատար եւ գթառատ:
Անիկա մեզ չի մեղադրեր մինչեւ վերջ, յաւիտեանապէս մեզի դէմ ոխ չի
պահեր:
Մեր մեղքերուն համեմատ չի պատժեր մեզ,
մեր անօրէնութիւններուն համեմատ չի հատուցաներ.
այլ՝ որքան որ երկինքը բարձր է երկրէն,
այնքան մեծ է իր հոգածութիւնը իրմէ ակնածողներուն հանդէպ.
որքան հեռու է արեւելքը արեւմուտքէն,
այնքան մեզմէ հեռացուց մեր յանցանքները:
Ինչպէս հայրը մը կը գուրգուրայ իր զաւակներուն վրայ,
այնպէս Տէրը կը գուրգուրայ իրմէ ակնածողներուն վրայ,
որովհետեւ ինք լաւ գիտէ մեր կազմուածքը, եւ չի մոռնար որ հողեղէն ենք:
Արդարեւ մարդուս կեանքը խոտի կը նմանի,
կը ծաղկի այնպէս՝ ինչպէս վայրի ծաղիկը.
երբ խորշակը անոր վրայ կը փչէ՝ ալ կը դադրի գոյութիւն ունենալէ,
անոր տեղն իսկ չես գիտնար:
Սակայն Տիրոջ հոգածութիւնը անվախճան է,
անոր արդարութիւնը մշտական է իրմէ ակնածողներուն հանդէպ,
անոնց հանդէպ՝ որոնք իր ուխտին հաւատարիմ են,
եւ չեն մոռնար գործադրել իր հրահանգները:
Տէրը իր գահը երկինքի մէջ հաստատեց,
իր թագաւորութիւնը ամենուն վրայ տարածեց:
Օրհնաբանեցէ՛ք Տէրը, ով հրեշտակներ,
անոր հրամանները լսեղ եւ գործադրող հզօր էակներ:
Օրհնաբանեցէ՛ք Տէրը, դուր՝ որ անոր բանակն է՛ք
եւ անոր կամքը կատարող պաշտօնեաները:
Օրհնաբանեցէ՛ք Տէրը, դուր՝ բոլոր ստեղծուածներ,
որովհետեւ անոր տէրութիւնը ամենուրեք կը տարածուի:
Օրհնաբանէ Տէրը, ով իմ անձս:

ԱՍՏՈՒԾՈՑ ՍԷՐԸ

Մեկ այլ ուրիշ Սաղմոս մը քաղուած Դաւիթի ժողովածուէն, 103-րդ Սաղմոսը: Սաղմոս մը, որ կը ներկայացնէ մեզմէ իւրաքանչիւրին վիճակը, եւ կը թելադրէ անդրադառնալու ըստ այնմ: Ան կը սկսի հեքաքրքրական արտայայտութեամբ, “Օրհնաբանէ Տէրը ով իմ անձս”: Արտայայտութիւն մը, որ Դաւիթ կը խօսի ինք իր անձին հետ, եւ կոչ կ’ուղղէ, որ իր անձը, այլ խօսքով՝ իր հոգին թող Տէրը օրհնաբանէ, ոչ միայն շրթներով, այլ ամբողջ էութեամբը, գորութեամբ, իր իւրաքանչիւր մասնիկը: Օրհնաբանութիւնը կապուած Տիրոջ կողմէ փրուած բարիքներուն, պարգեւներուն համար: Յաճախ մենք ալ կ’ուզենք օրհնաբանել զԱստուած եւ շնորհակալութիւն յայտնել Իրեն Իր փրուած բարիքներուն, որոնք ընդհանրա-պէս կապուած են նիւթական բարիքներուն, ամենօրեայ կեանքի անմիջական կարիքներուն, բայց այսպէղ Դաւիթ այդ նիւթական բարիքներուն մասին չէ, այլ շատ աւելի կարեւոր մէկ այլ ուրիշ երեսոյթին մը հետ կապուած, որուն արտայայտութիւնները մենք կը գտնենք Նոր Կրակարանի Աւերարանական հատուածներուն մէջ: Առիթով մը երբ Քրիստոսի բերին չորս երպասարդներ անդամալոյծ մը, բժշկուելու նպատակով, սակայն, Քրիստոսով փեսնելով անոնց հաւաքքը, ըսաւ անդամալոյծին մեղքերդ ներուած ըլլան քեզի: Մարմնաւոր բժշկու-թենէն շատ աւելի կարեւոր բժշկութիւն մը, մեղքերու քաւութիւն: Այսպէղ եւս Դաւիթ կ’անդ-րադառնայ ըսելով, Օրհնաբանէ Տէրը, ով իմ անձս եւ մի մոռնար անոր բոլոր բարիքները, որովհետեւ այդ բարիքները, մեղքերու քաւութիւնն են, հիւանդութիւններու բժշկութիւնն են, կեանքը կորուստէն փրկելն են, եւ Իր սիրովն ու գթութեամբը քեզ պարուրել են: Եւ այն-պիսի բարիքներով կը լեցնէ կեանքդ, որ մնաս երկրասարդ արծիւներու պէս: Այնպէս ինչպէս արծիւի պարագային, կը նորոգէ ինքզինք, որպէսզի վերստին կարենայ թռչիլ եւ իր որսը ապահովել, այնպէս ալ Տէրը Իր բարիքներով կը լեցնէ մարդուս կեանքը, որպէսզի աւարտին, հակառակ մարդուս ծերութեան, վերստին նորոգէ զինք եւ դարձնէ երկրասարդ: Դաւիթ կը շարունակէ իր միտքը եւ այս անգամ կ’անդրադառնայ, որ Տէրը բոլոր գրկեալներուն արդա-րութիւն կը հատուցանէ, եւ անոնց իրաւունքը կը պաշտպանէ: Հեքաքրքրականօրէն, յան-կարծ կ’արտայայտուի ըսելով, Տէրը Իր կամքը յայտնեց Մովսէսին եւ իր գործերը Իսրայէլի որդիներուն: Ի՞նչ յայտնեց Մովսէսին, անապատին մէջ Տասնաբանեայ պատուիրանները յայտնեց, որպէսզի անով ժողովուրդին գիտակցութեան հրաւիրէ անդրադառնալու իրենց մեղաւորութեան: Պատուիրանները չէին կրնար փրկել, անոնք պարզապէս ուղղութիւն փոխող էին: Հեքաքրքրական համեմատական մըն է, Աստուած Մովսէսին պատուիրանները փոխաւ, եւ անոնք արձանագրուած հինգամսպէս գիրքերու մէջ, նոյնպէս ալ Աւերարանին մէջ կը կարդանք Բեդիեզդայի աւագանի մասին, որ հինգ սրահներ ունէր, այնպէղ հիւանդներ կը սպասէին աւագանի ջուրերուն խառնուելուն, որպէսզի անոր մէջ իջնելով բժշկուէին: Նոյնպէս ալ Աստուած յայտնեց Իր կամքը Մովսէսին պատուիրաններով, բայց բժշկութիւնը փրկի պիտի ունենար այդ ջուրին խառնուելովը: Իսկ Իր գործերը յայտնեց Իսրայէլի որդի-ներուն, ոչ բոլոր Իսրայէլի որդիներուն, այլ անոնց՝ որոնք հաւաքարիմ են Իրեն: Յետոյ կ’անդրադառնայ Տիրոջ ողորմած եւ բարեգութ ըլլալուն, համբերաբար եւ գթառար: Եւ եթէ հարցնենք ինչո՞ւ համբերաբար է, մեր մեղաւորութեան համար, այլ եթէ համբերաբար չըլլայ, կը նշանակէ մեր ամէն մէկ մեղքին, պարիժ է որ պիտի փայ: Ամէն մէկ մեղքին փուշ եւ փայրասկ է որ պիտի բուսնի, ինչպէս որ եղաւ Ադամի եւ Եւայի պարագային: Պօղոս Առաք-եալ կ’ըսէ. Աստուծոյ համբերաբարութիւնը փրկութիւն համարեցէք: Ուրեմն

Աստուծոյ համբերապարտութիւնը, գթառապարտութիւնը մեր փրկութեան համար է: Այս միտքը աւելի յարակօրէն ներկայացնելու, յաջորդ համարին մէջ կ'ըսէ. մեր մեղքերուն համեմատ մեզ չի պատժեր եւ չի հապուցեր, այլապէս ոչ ոք կրնայ փրկուիլ: Այնպէս ինչպէս Ներսէս Շնորհալի հայրապետին իր աղօթքին մէջ կ'ըսէ. Արդարութեամբ մի դատեր, այլ գթութեամբ քաւէ մեր մեղքերը: Դաւիթ կ'անդրադառնայ Աստուծոյ հոգածութեան անսահման ըլլալուն, երկինքի բարձրութիւնը երկրէն, սակայն այդ հոգածութիւնը իրմէ ակնոժողներուն հանդէպ: Իսկ մեր մեղքերը մեզմէ հեռացուց այնպէս ինչպէս արեւելքը արեւմուտքէն: Պատկերացում մը, արեւ մարին, ուր մեր մեղքերը կը մարին, անոր փոխարէն Աստուծոյ շնորհքը կը ծագի, արեւելքի նման: Յետոյ կ'անդրադառնայ Աստուծոյ հոգածութեան հօր մը պէս, ինչպէս հայր մը կը գորգորայ իր գաւակներուն վրայ: Ապա կը խնդրէ որ Տէրը յիշէ որ Ինք մեզ հողեղէն է սրեղծած, այսինքն՝ շարունակէ ցուցաբերել Իր ողորմութիւնը հանդէպ այդ հողեղէնին: Յետոյ կը յիշեցնէ, թէ մարդուս կեանքը, որքան ալ յաջողութիւններով լեցուն ըլլայ, կը նմանի խոտի, որ կը ծաղկի, վայրի ծաղիկի նման, հարստութեամբ, յաջողութեամբ, հպարտութեամբ, բայց շատ կարճ ժամանակով: Այսպէս նաեւ յիշեցում է, մարդուն, որ ինչպիսին ալ ըլլան յաջողութիւններդ, դիրքդ, համբաւդ, խորքին մէջ ուրիշ բան չես, եթէ ոչ վայրի ծաղիկի նման, ժամանակաւոր գեղոցկութիւն ունեցող, բայց յետոյ ալ չկայ: Իսկ ասոր դիմաց Աստուծոյ հոգածութիւնը անսահման է եւ արդարութիւնը մշտական: Ուրեմն որ մէկուն վրայ շեշտը դնել, ժամանակաւորին կամ թէ մշտական: Դարձեալ կը կրկնէ ըսելով, այս բոլորը անոնց, որոնք իրմէ ակնածողներն են, այսինքն՝ անոնք որոնք Իր ուխտին հաւատարիմ են, եւ չեն մոռնար գործադրել Իր հրահանգները: Այն Ուխտը որ կնքեց Նոյին, Աբրահամին, Իսահակին, Յակոբին, եւ այն բոլոր հաւատարիմներուն հետ, փրկութեան Ուխտը, եւ Անոր հրահանգներ գործադրողներուն, Անոր պատուիրանին համաձայն ապրողներուն: Ի վերջոյ, կը յիշեցնէ, որ Տէրը Իր թագաւորական գահը հաստատեց, եւ Իր թագաւորութիւնը ամենուրեք է, ուրեմն ըստ այնմ նկատի ունեցիր: Նաեւ կը յիշէ թէ ինչպէս ոգեղէն էակները, հրեշտակները, հակառակ հօր էակներ ըլլալուն, անոնք Տիրոջ հրամանները լսող եւ գործադրողներ են, Աստուծոյ կամքը կատարողներ են, նոյնպէս ալ բոլոր սրեղծուածներ կոչուած էք Տիրոջ օրհնաբանելու, մանաւանդ Անոր Տէրութիւնը ամենուրեք տարածուած է: Աստուած մարդս սրեղծեց որպէսզի մարդը գիտակցաբար վայելելով Աստուծոյ փութ բարիքները օրհնաբանէ Տէրը: Աստուած փութ լեզու մարդուն որպէսզի անով օրհնաբանէ Տէրը, եւ ոչ թէ անիծէ: Յետոյ ինքզինքին յիշեցում փալով, Դաւիթ դարձեալ կը կրկնէ ըսելով. Օրհնաբանէ Տէրը, ով իմ անձս: Նոյն կոչ հրաւերը մեզի է նաեւ, օրհնաբանելու Տէրը Իր փութ բոլոր բարիքներուն, ու մանաւանդ՝ մեր մեղքերուն քաւութիւն եւ թողութիւն շնորհելուն համար:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի փութ եւ ի գիշերի,
ի նստիլ ի փան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ք քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*